

ՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԻՒՆԸ ՄԵՐՁԱՐԵԻՆԵԱՆ ԱՐԴԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՆԹԱԽՈՐՔՈՒՄ

ՄԱՐԻԱՄ ՄԱՐԳԱՐԵԱՆ (mariam.margaryan@paara.am)

ԳԱՐԻԿ ՊՕՂՈՍԵԱՆ (garik.poghosyan2011@gmail.com)

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Ֆրանսիացի գիտնական Դոմինիկ Մոյզին արդի միջազգային յարաբերությունների ցանցային բազմաչափությունը դիտարկում է «զգացմունքների բախման» պրիսմակով¹: Ըստ նրա՝ վախի, յոյսի, ստորացման զգացմունքները մարդկության քաղաքական գործունեության շարժիչ ուժեր են: Ըստ Մոյզի՝ «Ասիայի որպես մարտահրավեր վերելքով եւ արմատականության որպես սպառնալիք ծառայումը Արեւմուտքն այսօր բախում է իր ինքնության վերաբերելու լուրջ հարցերի»²: Մանրամասնելով՝ Մոյզին **յոյսի մշակոյթը** ներկայացնում է որպես «տնտեսական եւ ընկերային» հզորացում, որի «հիմնական բնակավայրն Արեւելքն է»³: **Ստորացման մշակոյթը** յոյսի հակապատկերն է. «Եթե՛ յոյսը վստահություն է, ապա նուաստացումն անկարողություն է, մի զգացմունք, որ առաջին հերթին բխում է այն զգացողությունից, որ դու այլեւ չես վերահսկում քո կեանքը ոչ հաաքապես՝ որպես ժողովուրդ, ազգ կամ կրօնական համայնք, ոչ էլ անհատապես»⁴: Յատկանշական է, որ Մոյզին **ստորացման մշակոյթը** վերլուծում է իսլամի եւ քրիստոնեության յարաբերությունների ենթախորքում՝ շաղկապելով այն ինչպես Իսրայելի, այնպես էլ - իր բնորոշմամբ - արաբական մշակութային անկման հետ: Համոզուած ենք, որ Մոյզիի այսպիսի մեկնաբանությունը լոյս է սփռում քաղաքակրթությունների երկխոսության միջոցով տեղական քաղաքակրթությունների վերածննդի պատկերացումների քաղաքական էության հիմնաւորման վրայ: Որպես միջազգային յարաբերությունների երրորդ անկիւնաքար Մոյզին դիտարկում է **վախը**՝ այն բնորոշելով որպես «ինքնության ճգնաժամ, որին բախում է Արեւմուտքը»⁵:

Քաղաքակրթության ուսումնասիրման իւրօրինակ ձեւաչափ է առաջարկում Նիիլ Ֆրզըսընը: Ըստ նրան՝ երկրների գաղափարախօսությունն ու տնտեսական ձեռքբերումները նոյնքան կարեւոր են, որքան կենցաղն ու

¹ Dominique Moisi, *The Geopolitics of Emotion: How Cultures of Fear, Humiliation, and Hope Are Reshaping the World*, Doubleday, 2009:

² Նոյն, էջ 21:

³ Նոյն, էջ 32:

⁴ Նոյն, էջ 56:

⁵ Samuel P. Huntington, *The Clash of Civilizations and the Remaking of World Order*, Simon & Schuster, 1996:

ընկերային-մշակութային բազմաձեւ առնչությունները եւ դրանց դերակատար «փափուկ ուժը»⁶ :

ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԻՒՆ
ՈԼՈՐԱՊՏՈՅՏՈՒՄ

ՆՈՐ

ՄԱՐՏԱՀՐԱԽԷՐՆԵՐԻ

Հնարաւոր է արդեօք իմի բերել հայկական քաղաքակրթութեան ոգեղէնութիւնը աշխարհաքաղաքական սրընթաց իրողութիւնների ենթախորքում: Եթէ Առնոլդ Թոյնսպին նշում էր, որ «*առնչակցությունների (intercourse) անտիկ ալիքները, որոնցով մշակույթի կենարար առուն հոսում էր Իրանից դէպի Անատոլիա, վերջին չորսհարիւր տարում փակուեց Օսմանեան եւ Աֆեան կայսրությունների, ինչպէս նաեւ սուննիների եւ շիաների առանձին տիրոջների (segregated domain) միջեւ նոր սահմանով*»⁷, ապա կարո՞ղ ենք արդեօք հայերս, անուշադրութեան մատնել քաղաքակրթական ներքին ու արտաքին կողմնորոշիչների որոշակիացման անհրաժեշտութիւնը:

Անհնար է երեւակայել, որ հայկական քաղաքակրթական ինքնութիւնը դիտարկուի Արեւելք-Արեւմուտք խաչուող ուղիներից հեռու՝ մի կովկասեան անկիւնում: Հայ մարդու համար խորթ են Արեւելքի վերաբերեալ Արեւմուտքի կարծրատիպային պատկերացումները: Դրա վառ վկաութիւններից է Կոստան Զարեանի հաւաստումն առ այն, որ «*մահմեդական Սպանիան դառնում է աշխարհի մեծագոյն քաղաքակրթական կենտրոններից մէկը... հիմնում են բարձրագոյն դպրոցներ, որ զարկ են տալիս գիտութեան եւ փիլիսոփայութեան: Անապատները ոռոգում են, երկիրը հարստանում է... Սպանիայի ոգին, նախ ընկճուած, գրեթէ անհետացած, կամաց կամաց արթնանում է*»⁸: Զարեանական ընկալումը պատմութիւնը դիտարկում է իր հարահոս զարգացման գործոնների բազմաչափութեան մէջ՝ առանց նախապաշարմունքների: Հայկական քաղաքակրթական միջավայրը բազմաբովանդակ եւ ներքին հակասութիւններով ու փոխլրացնող կենսաձեւերով հարուստ մերձարեւելեան-հարարեւելատարածական տարածութեան բաղկացուցիչ մաս է: Հետեաբար, հայկական քաղաքակրթութեան՝ արդի մարտահրաւերներին արձագանգելու ոգեղէնութիւնը պէտք է դիտարկել հենց այդ տարածութիւնից բխող ազդակների որոշակիութեամբ: Այս է պատճառը, որ քաղաքակրթութեան սահմանման համար մենք հիմք ենք ընդունում ազգային գաղափարախօսութեան հետեւեալ սահմանումը. «**Ազգային գաղափարախօսութիւնը օրգանական միասնութեան մէջ գտնուող, պատ-**

⁶ Нил Фергюсон, *Цивилизация. Чем Запад отличается от остального мира*, Издательство АСТ, 2014 (Niall Ferguson, *Civilization: The West and the Rest*), էջ 160:

⁷ A. J. Toynbee, *A Study of History, volume one*, fourth Impression, Oxford University Press, 1948, էջ 395, 484:

⁸ Կոստան Զարեան, *Սպանիա*, Զանգակ հրատ., Երեւան, 2018, էջ 52:

մականօրէն ձեւաւորուած տեսակի կենսունակութեան ապահովմանն ուղղուած արժէքների համակարգ է»⁹:

Եթէ հայկական ինքնութիւնն իր տարաբնոյթ չափումներով, ինքնարտայայտման եւ ինքնահիրացման միջոցներով կարող է կենցաղ-մշակութային կամ քաղաքական հակասութիւններ ծնող պատճառ հանդիսանալ, ապա հայկական քաղաքակրթութեան բազմաշերտութիւնը, պէտք է համարել համապարփակ: Յիրաւի, Հայաստանն ըստ էութեան մերձարեւելեան քաղաքակրթութիւն է առաջին հերթին եւ նրա եւրոպական ձգտումներն ու կողմնորոշումը դէպի Արեւմուտք պէտք է դիտարկել հենց այս մտայնութեամբ: Իսկ քանի որ, քաղաքակրթութիւնը որպէս յարատեւ շարժընթացային երեւոյթ ունի իր ե՛ւ անփոփոխ, ե՛ւ փոփոխական չափման միաւորները, ուստի պէտք է ընդունել, որ անհրաժեշտ է քաղաքակրթութիւնների սահմանները գծել այնպէս, որ դրանք համապատասխանեն քաղաքական արդի իրողութիւններին: Իրն Զէյն Բիդն այս կապակցութեամբ պնդում է, որ «*Եթէ Շպենգլերը հասարարիմ մնար պարմութեան իր շրջփուլային (ցիկլային) տեսութեանը, ապա նա չէր կարող մարնանշել (identify) որեւէ քաղաքական երեւոյթ, որը որպէս համաշխարհային կշռութաւոր պարմութեան հերթական շրջափուլից զար որեւէ բան է*»¹⁰: Փաստօրէն տեղի է ունենում **արժէքաբանական մեքենական համադրում, ինչը մեր խորին համոզմամբ կարող է յանգեցնել հայ մարդու՝ հայկական ընկերամշակութային միջավայրից օտարման: Ակնյայտ է, որ** հայկական քաղաքակրթութիւնը կարիք չունի վազել եւ հասնել արեւմտեան քաղաքակրթութեանը՝ քաղաքական արդիականացման աֆրօ-լատինական փորձի օրինակով: Այսինքն, կարիք չկայ մեքենական արդիականացման՝ վտանգելով պատմութեան հոլովոյթում քննութիւն բռնած սեփական ինքնութիւնը: Մինչդեռ անհրաժեշտ է չմոռնալ, որ «*ողջ ընկերային կեանքը մարդկանց միջեւ տեղի ունեցող փոխազդեցութիւնների գործընթաց է, որը հնարաւորութիւն է տալիս ներկայացնելու սեփական շահերն ու նպատակները՝ ենթադրելով անխուսափելի մրցակցութիւն մարդկանց միջեւ*»¹¹:

Ասուածը հիմնաւորենք այն համոզմամբ որ 2020ի աշնանը Արցախի դէմ սանձազերծուած թուրք-ադրբեջանական պատերազմի ողբերգական հետեանքները մերձարեւելեան քաղաքական օրինաչափութիւնների օրինակ են եւ չեն ենթարկում արեւմտեան քաղաքակրթական չափորոշիչների մեծամասնութեանը: Աւելին՝ միայն միջազգային կառուցակարգերի շնորհիւ

⁹ Մ. Մարգարեան, *Քաղաքական արդիականացման հրամայականները Հայաստանի Հանրապետութիւնում*, «Պետական ծառայութիւն հրատ.», Երեւան, 2019, էջ 239-40:

¹⁰ J. I. Kidd, “Oswald Spengler, Technology, and Human Nature,” *The European Legacy*, 17(1):2012, էջ 22:

¹¹ Մ. Մարգարեան, *Քաղաքական լիդերութիւն: Տեսութիւն եւ պրակտիկա*, ՀՀ պետական կառավարման ակադեմիա, Երեւան, 2017, էջ 23:

է (խաղաղապահ առաքելութիւն), որ յաջողում է զսպել բռնութեան նոր ափսոսանքի առաջացումն ընդդէմ արցախահայութեան եւ Արցախի ինքնապաշտպանական ուժերի: Մարդատեսացութեան դրսեւորումները, Թուրքիայի կողմից վարձկան ահաբեկիչների ներգրաւումը¹² պատերազմի ընթացքում փաստում են որ հակաարցախեան ահաբեկչական պատերազմի արմատներն աւելի խորն են: Անհրաժեշտ է խոստովանել այն, որ եթէ պոստիական պատերազմից¹³ յետոյ եւրոպական մայրցամաքում մեծ հաշուով բացառում են ազգամիջեան յարաբերութիւնների սրման այնպիսի դէպքերը, որոնք յանգեցնեն լայնածաւալ ահաբեկչական պատերազմի, էթնիկ զտումների կամ ցեղասպանութեան, ապա Արցախի դէմ յարձակումը հայ-թուրքական միջքաղաքակրթական փոխյարաբերութիւնն այս իմաստով դարձնում է անգամ աւելի՝ խոցելի, քան ռուս-վրացական լարուածութիւնն է կամ պատերազմը Դոնբասում¹⁴: Ակնյայտ է, որ արցախեան իրադարձութիւններն աւելի նման են Սիրիայում ծաւալուող իրադարձութիւններին, ինչպէս նաեւ «արաբական գարնան» հետեւանքով արաբական աշխարհը պառակտումների ու բռնութեան տարածութեան վերածած քաղաքականութեանը, իրանախորայէլեան դիմակայութեանը, քան ոչ միայն եւրոպական, այլեւ յետխորհրդային տարածքի հակամարտութիւններին: Ադրբեջանը եւ Թուրքիան, Իսրայէլի արհեստագիտական աջակցութեամբ¹⁵ եւ միջազգային ահաբեկչական խմբերի ներգրաւմամբ, լայնածաւալ յարձակում են սանձազերծում Արցախի չճանաչուած Հանրապետութեան դէմ: Անհնար է անուշադրութեան մատնել այն փաստը, որ արեւմտեան պետութիւններն ու կառոյցները - առանձին բացառութիւններ չհաշուած - չեն դատապարտել Արցախի դէմ ահաբեկչական պատերազմը: Իրադարձութիւնների այսպիսի ընթացքը լոյս է սփռում մի կողմից ՀՀի ներքաղաքական դաշտում եւ արտաքին քաղաքականութեան մէջ ուրուագծուող անորոշութիւնների տարածման, միւս կողմից քաղաքակրթական կողմնորոշիչների՝ որպէս արտաքին քաղաքականութեան հիմնարար դրոյթների բացակայութեան

¹² “Turkish-Backed Syrian Fighters Join Armenian-Azeri Conflict” *The Wall Street Journal*, October, 14, 2020 (<https://www.wsj.com/articles/turkish-backed-syrian-fighters-join-armenian-azeri-conflict-11602625885>):

¹³ I. H. Daalder, “Decision to Intervene: How the War in Bosnia Ended,” Brookings, <https://www.brookings.edu/articles/decision-to-intervene-how-the-war-in-bosnia-ended/> :

¹⁴ “Conflict in Ukraine’s Donbas: A Visual Explainer,” International Crisis Group (<https://mineconomy.am/en/page/789>):

¹⁵ R. Dixon, “Azerbaijan’s drones owned the battlefield in Nagorno-Karabakh - and showed future of warfare,” *The Wall Street Journal*, November 11, 2020 (https://www.washingtonpost.com/world/europe/nagorno-karabakh-drones-azerbaijan-armenia/2020/11/11/441bcbd2-193d-11eb-8bda-814ca56e138b_story.html):

վրայ: Այս է պատճառը, որ աշխարհագրական գործոնի ազդեցությամբ ձեւաւորուած այն համոզմունքը, որ պետութիւնները չեն կարող «ինչ-որ տեղ գնալ», անհրաժեշտ է դարձնել որոշակի մակարդակներում յստակ ձեւակերպուած քաղաքական տեսական: Բնական է, որ քաղաքական զարգացման որոշ առանձնայատկութիւններով պայմանաւորուած ՀՀ-ն չի կարող կատարել ոչ միայն աշխարհաքաղաքական, այլեւ քաղաքակրթական շրջադարձեր: Հայաստանն համարկում է ինչպէս եւրասիական, այնպէս էլ եւրոպական վերազգային կառոյցներին: Այս համարկման նախագծերը, սակայն, միայն մասամբ են արտայայտում հանրութեան քաղաքական զարգացման նկրտումների քաղաքակրթական չափումները, իսկ միջազգային փորձը ցոյց է տալիս, որ դրանք միշտ չէ որ արդիւնաւետ են մրցունակ ռազմավարութեան տեսակէտից: Յայտնի է, որ «Հենց մրցունակ ռազմավարութեան տեսակէտից էլ քննադատուեց եւ վերաիմաստաւորուեց 1970-80ականներին Լատինական Ամերիկայում եւ Ափրիկէում «ժամանակակից հասարակութիւն» կառուցելու նպատակով ծաւալուած, սակայն ակնկալուած ժողովրդավարութիւն չհաստատուած փոփոխութիւնների ձեւական ռազմավարութիւնը»¹⁶: Ակնյայտ է, որ դիցուք Եւրոպայի Խորհրդին անդամակցութեամբ Հայաստանը կոչուած էր լուծելու բարեփոխումների առաջադէմ երկրների փորձից ետ չմնալու, ինչպէս նաեւ դէպի Արեւելք ընդլայնուող եւրոպական նախագծերում «ծայնի իրաւունք» ունենալու խնդիրներ: Յետսովետական տարածքի քաղաքական կերպափոխումների տրամաբանութիւնն ամէնեւին խորթ չէր Հայաստանի երրորդ Հանրապետութեանը:

Այս իրավիճակում բոլորովին նպատակայարմար չենք դիտարկում ՀՀ-ն մերձարեւելեան քաղաքական ու աշխարհաքաղաքական ընթացքից զատելը: Նախ, ինչպէս արդէն ասուեց, դա ոչ միայն ՀՀ քաղաքակրթական պատկանելութիւնը միակողմանիօրէն դատելու, այլեւ քաղաքական անհեռատեսութեան հետեւանք է: Երկրորդ, ինչպէս արցախեան վերջին պատերազմը, այնպէս էլ պատերազմին յաջորդած թուրքական յարձակողամէտ եւ իրանական քաղաքականութեան նրբերանգները թոյլ են տալիս պնդելու, որ ՀՀ-ն ոչ թէ «Հարաւային Կովկաս» տարածաշրջանի, այլ Հայկական Լեռնաշխարհում ձեւաւորուած հայկական քաղաքակրթութեան կրողն ու արարողն է:

Վստահ ենք, որ միայն հորիզոնական (ցանցային) կապերի զարգացման ճանապարհով քաղաքակրթօրէն կողմնորոշուելու էաբանութիւնը (ontology) կարեւոր հանգրուան է հայ երիտասարդութեան ինքնութեան արդիականացման չափորոշիչների մշակման տեսանկիւնից: Համոզուած ենք,

¹⁶ Մ. Մարգարեան, «Քաղաքական արդիականացման քաղաքակրթական չափումը որպէս ռազմավարական կառավարման ապահովման հիմք», *Հայկական բանակ, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ ռազմագիտական հանդէս*, 4(94):2017, էջ, 21-22:

որ քաղաքականության եւ քաղաքակրթության ուսումնասիրութիւնները խաչում են հայկական քաղաքակրթության գոյաբանական հարցերի արծարծման ծիրում:

ԼԻԲԱՆԱՆ

Այս ժամանակաշրջանում ծանր օրեր ապրող Լիբանանի ժողովրդի համար եւս կարեւոր է քաղաքականության եւ քաղաքակրթության խաչմերուկում առաջացող խնդիրների լուծումը քաղաքակրթական պատկանելութեամբ տեսնելը: Այն կարող է նկատելիօրէն նուազեցնել հայ եւ լիբանանցի ժողովուրդների կախածութիւնը քաղաքակրթական ինքնութիւնը շահարկող դերակատարների խաղային քաղաքականութիւնից: Որքանո՞վ են հայ եւ լիբանանցի ժողովուրդները պատրաստ ոչ միայն դիմագրաւելու, այլեւ մարտահրաւերներ նետելու: Եթէ հայկական քաղաքակրթության դէպքում հակումը ենք խնդիրը բացատրել ինքնութեան կողմնորոշիչների յետսովետական տարերայնութեամբ, ապա Լիբանանի բազմամշակութային միջավայրը քաղաքական դերակատարների բազմաչափ հակասութիւնների տարածութիւն է: Ստացում է, որ մինչ Հայաստանն ու Լիբանանն ունեն մերձարեւելեան քաղաքականութեան քաղաքակրթական տիրոջում գործակցութեան ու փոխըմբռնման տարածութիւնում ինքնադրսեւորուելու հնարաւորութիւն, արդի խառնաշփոթութեան պայմաններում վտանգուած է նրանց քաղաքակրթական ինքնութեան բնականոն արդիականացման գործընթացը: Այս խնդրում շարունակում է կարեւոր դեր վերապահուած մնալ Անգլիայի Ճոն արքայի կողմից 1215ի Յունիսի 15ին ստորագրած «Ազատութիւնների Մեծ Ուխտ» (Magna Carta Libertatum) փաստաթղթում տեղ գտած արժէքաբանութեան զարգացմանը: Լինելով թագաւորի դէմ ապստամբած խոշոր աւատատէրերի, հոգեւորական բարձր դասի եւ քաղաքային բնակչութեան վերնախաւի յաղթանակի արդիւնք՝ Ուխտը դարձաւ Մեծն Բրիտանիայի սահմանադրական-օրէնսդրական հիմնարար փաստաթղթերից մէկը՝ ազդելով այլ արեւմտեան երկրների իրաւական համակարգի կայացման վրայ: Այս փաստաթղթի 800ամեայ պատմութիւնն ապացուցում է, որ այն անգլոսաքսոնական քաղաքակրթութեանը թոյլ տուեց ոչ միայն բնականոն կերպով արդիականանալու, այլեւ ընդարձակելու իր սահմանները՝ իմաստաւորելով ազատութեան, օրէնքի գերակայութեան, ժողովրդավարութեան ընկալման հաստատութեան, վարքաբանական եւ գործառութեան հոգեւորականութեան հիմքերը: Այս ենթախորքում այլ քաղաքակրթութիւններ որոշակիացրին բնականի եւ զգայականի փոխյարաբերութիւնները յետագայ քաղաքական զարգացումներում: «Ազատութիւնների Մեծ Խարտիայի» օգնութեամբ մարդիկ ազատութիւնը եւ ազատականացումն (freedom and liberty) սկսեցին իմաստաւորել որպէս հարկադրանքից ձերբազատուած հնարաւորութիւն, որը թոյլ է տալիս մարդուն անվտանգ

կեցութիւն կազմակերպել ինքնարտաշայտուելով եւ ինքնադրսետրուելով»¹⁷։ Այս առումով կարելի էր դեր է վերապահուած էթնիկական այն հանրութիւններին, որոնք տուեալ երկրի քաղաքակրթական ինքնութեան սահմաններում կը ձգտեն դառնալ փոփոխութիւնների ցուցիչ կամ յարուցիչ։ Հենց այստեղ է, որ հորիզանական կապերով ցանցային տրամաբանութիւնը դառնում է ե՛ւ այժմէական, ե՛ւ պահանջարկ ունեցող քաղաքական երեւոյթ։

«ՀԱՅԿԱԿԱՆ ՑԱՆՅԵՐ» ԵՒ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԻՒՆ

ՀՀ անկախութեան եւ անվտանգութեան ապահովման հետ է կապուած համայն հայութեան համախմբումը Հայաստանի շուրջ։ Այսինքն «Հայկական աշխարհը» ներառում է ոչ միայն հայ հանրութեան մշակութաբանական էութիւնը, այլեւ աշխարհագրառազմավարական եւ ազգային-գաղափարախօսական շահերի, նպատակների, առանձնայատկութիւնների ամբողջութիւնը¹⁸։ Քաղաքական դերակատարները քաղաքական խաղի մասնակից կարող են դառնալ իրենց քաղաքակրթական ինքնութեամբ։ Եթէ աշխարհաքաղաքական ցանցերի դէպքում գործ ունենք այս կամ այն չափով դրսետրուող քաղաքակրթական միաւորի հետ (դիցուք Արաբական Լիգան միաւորում է արաբական աշխարհի երկրները), ապա քաղաքական դերակատարների տարաբնոյթ ուղերձները ենթադրում են էթնօկրօնական ու քաղաքակրթական ինքնութեան ոգեղէնութեան համակարգուած ուսումնասիրութիւն։ Տարածաշրջանային դերակատարների շարքում Իրանին ու Թուրքիային զուգահեռ խիստ արդիական են դարձել Սաուտեան Արաբիայի եւ Շոցի երկրների, Իսրայէլի քաղաքական-քաղաքակրթական դերաբաշխման հետազօտութիւնները։ Բնականապէս հարց է առաջանում. որքանո՞վ են հայկական, լիբանանեան, սիրիական, իրանական քաղաքակրթական ինքնութիւնները պատրաստ ընկալելու աշխարհաքաղաքական միջավայրի արագընթաց (հիմնականում անորոշ) փոփոխութիւնները եւ դրանք տեղաւորելու իրենց «**ես**»ի բնականոն արդիականացման ծիրում։ Ընդունա՞կ ենք արդեօք տեղայնական քաղաքակրթութիւնները վերարժեւորելու եւ ինքնորոշուելու...:

Համոզուած ենք որ հենց քաղաքակրթական ինքնորոշման ցածր աստիճանն է պատճառը յաճախակիացող մերձարեւելեան ճգնաժամերի համար։ Հետեաբար, անհրաժեշտ է քաղաքակրթական ինքնորոշումը, քաղաքակրթական բնոյթ ունեցող այլ չափորոշիչների հետ, դիտարկել որպէս քաղաքական զարգացման գործընթացի բաղադրիչ։ Մեր առաջարկած այս

¹⁷ Մ. Մարգարեան, «Ազատութիւնների մեծ խարտիան եւ արդի քաղաքական զարգացման արժէքաբանութիւնը», *Տարեգիրք Ազատութիւնների Մեծ Խարտի*, Պատմութեան հարցեր 5, Երեւան, 2019, էջ 210:

¹⁸ Մ. Մարգարեան, Համընդհանուր անվտանգութեան համակարգի արդիականացման հիմնախնդիրները եւ «Հայկական աշխարհը», *Հայկական բանակ, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ ռազմագիտական հանդէս*, 1-2(67-68):2011, էջ 118-29:

մօտեցման հիմքում դրել ենք ԱՄՆ ընկերաբան Պիտրիիմ Սորոկինի այն մօտեցումը, որ առանց միաուրի կամ տրամաբանական առարկայի ոչ մի գործընթաց, ոչ մի շարժընթաց վիճակ (state) ընդհանրապես հնարավոր չէ նկատել, երեակայել կամ նկարագրել: Միաուրը որպես տրամաբանական առարկայ, փոփոխություն կամ փոխակերպում (modification) պետք է տրուի¹⁹: **Բնականօրէն Մերձաւոր Արեւելքին կապուած լինելով քաղաքակրթօրէն, հայկական համայնքները, մասնաւորապէս նրանց երիտասարդութեան հայրենասէր (ինքզինք հայ դերակատար համարող) շերտը, կարող են կամրջել ՀՀ** արաբական աշխարհի, Իրանի, ինչու՞ ոչ՝ նաեւ Իսրայէլի եւ Թուրքիայի հետ: Վերջին երկուսի պարագայում հայկականութեան, Հայ Եկեղեցու իրաւունքների, հայոց պատմութեան, մասնաւորապէս Հայկական Յեղասպանութեան (Մեծ Եղեռնի) եւ պահանջատիրութեան ու յարակից հարցերն անելի սուր են, քան արաբական արեւելքի եւ Իրանի դէպքում: Բայց չպէտք է անտեսել որ հայկական քաղաքակրթութեան ինքնորոշման ազդակները ցանցային բնոյթ ունեն եւ որքան աշխարհագրօրէն ընդարձակ լինեն, այնքան անելի հեշտ ընկալելի կը դառնան տարածաշրջանի մեծ ու փոքր պետութիւնների համար: Հասկանալով հանդերձ մերձարեւելեան հակասութիւնների եւ աններդաշնակ քաղաքականութեան բնոյթը, կարծում ենք, որ Մերձաւոր Արեւելքի ժողովուրդները ունակ են հասնելու մի նոր «Վեստֆալեան հաշտութեան»: Սակայն ինչպէ՞ս հասնել մի այդպիսի աշխարհակարգի, եթէ դեռեւս ճանաչուած չեն տեղային քաղաքակրթութիւնների ինքնորոշման իրաւունքն ու իրաւական շահերին հետամուտ լինելու արտօնութիւնը: Ինչպէս ցոյց տուեցին Սիրիայի աղէտալի գործընթացները, Թուրքիայի Հանրապետութեան կայսերապաշտական նկրտումները կրում են պատժիչ բնոյթ (թուրքական բանակի գործողութիւնները քրտական ուժերի դէմ)²⁰, իսկ Թուրքիան ինքը հակուած չէ ճանաչելու տարածաշրջանային այլ ուժերի իրաւական նպատակները:

Հենրի Քիսինճըրը գործող աշխարհակարգի քննութեան մէջ զգալի տեղ յատկացնելով Վեստֆալեան հաշտութեան²¹ ուշադրութիւն է հրաւիրում այն հանգամանքի վրայ, որ «մեր օրերում Վեստֆալեան խաղաղութիւնն ընդունուած է համարել յեղազայում ամբողջ աշխարհում տարածուած աշխարհակարգի իրականացման առաջին փուլը»²²: Ակնյայտ է, որ Վեստֆալիան որպէս աշխարհակարգի հիմք ունեցել է զարգացման բնաշրջման բնոյթ: Այս տրամախօսութեամբ էլ պայմանաւորում ենք մեր այն համոզ-

¹⁹ P. Sorokin, *Social and Cultural Dynamics*, 3 Volumes, American Book Company, New York, 1937:

²⁰ Council on Foreign Relations, “Conflict Between Turkey and Armed Kurdish Groups,” <https://www.cfr.org/global-conflict-tracker/conflict/conflict-between-turkey-and-armed-kurdish-groups> :

²¹ Henry Kissinger, *World Order*, Penguin Press, New York, 2014, էջ 30-38:

²² Նոյն:

մունքը, որ հնարաւոր է քաղաքակրթութիւնների երկխօսութեան ճանապարհով հասնել հարաւարեւելաւրոպական-մերձարեւելեան տարածաշրջանի քաղաքակրթութիւնների մերձեցմանն այն աստիճան, որ ձեւաւորուի տարածաշրջանի բնիկ ժողովուրդների իրաւական ձգտումներն ու իրաւունքները արտայայտող նոր որակի Վեստֆալիայի քաղաքական-հանրային պահանջ: Համոզուած ենք, որ առաջարկուող նմանօրինակ քաղաքական զարգացումը ոչ միայն նպաստելու է Արեւելք-Արեւմուտք ասանդական երկուութիւնը քաղաքակրթութիւնների երկխօսութեամբ փոխարինելուն, այլեւ զսպելու է «ուժային բեւեռների» պատմականօրէն ձեւաւորուած եւ չհիմնաւորուած քաղաքակրթական նկրտումներն:

ՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ ԻՆՔՆՈՐՈՇՄԱՆ ԵՒ ՅԱՐԱԿԻՑ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՋ

Հայկական քաղաքակրթութիւնը բազմակողմ յարաբերութիւններ ունի Արեւելքի եւ Արեւմուտքի ժողովուրդների հետ: Այս դիտանկիւնից մենք այն համոզումն ունենք որ քաղաքակրթական ինքնորոշումն այն բանաձեւն է, որն ունակ է օգնել տարածաշրջանի ժողովուրդներին սեփական ճակատագիրն ինքնուրոյն տնօրինելով՝ բռնել ազգային «**ես**»ի բնականոն արդիականացման ուղին: Այս եզրահանգումը բազմանշանակէտ է եւ առնչում է Արեւելք-Արեւմուտք փոփոխուող ընկալումների ենթաշերտերում հայկական քաղաքակրթութեան դերընտրութեանը: Այսպէս, Քոլումպիայի Համալսարանի պրոֆեսոր Համիտ Տապաշին մինչեւ անգամ փորձում է հիմնաւորել Արեւմուտք եզրի (notion) վախճանը՝ պնդելով, որ երբ Սեպտեմբերի 11ի ահաբեկչութիւնից յետոյ ԱՄՆ առաջնորդուեց «կամաւորութեան դաշինքի» սկզբունքով (coalition of the willing), Արեւմուտք հասկացութիւնն այլեւս արժէք չունէր ՆԱՏՕի համար: Աւելին, Տապաշին գտնում է, որ այսպէս կոչուած Հին Եւրոպայի եւ Նոր Եւրոպայի բաժանումը նոյնպէս Արեւմուտքի ներքին ոչնչացման մասին է վկայում²³: Քաղաքակրթական ինքնորոշումը չի ենթադրում այս կամ այն քաղաքակրթութեան մերժում կամ վերջնական կողմնորոշում դէպի որեւէ մէկը: Ուստի արտաքին քաղաքակրթական ազդակներին ճիշտ արձագանգելու համար անհրաժեշտ է որոշակիացնել քաղաքակրթական «**ես**»ի տարածութիւնը բազմաշաւի ժամանակի մէջ: Այստեղից էլ ինքնաճանաչողութեան իւրայատկութիւններով պայմանաւորուած հիմնային է Հանթինկթընի այն պնդումը որ «*առաջիկայ տասնատեակներում ինքնութեան, մշակութային ժառանգութեան, լեզուի եւ կրօնի հարցերը կենտրոնական դեր կը խաղան քաղաքականութեան մէջ*»²⁴:

²³ H. Dabashi, *Iran: The Rebirth of a Nation*, Palgrave Macmillan, 2016, էջ 238:

²⁴ S. Huntington and Ali A. Hirs, "The Clash of Civilizations Revisited," *New Perspective Quarterly*, Winter, 24(1):2007, էջ 53-59:

Այս դիտանկյունից կատարենք հետեւեալ հարցադրումը՝ ունէ՞ր արդեօք նորանկախ Հայաստանը բաւարար պաշարներ կեանքի կոչելու իր քաղաքակրթական ինքնորոշման բանաձեւը յետխորհրդային անցման բարդ ժամանակաշրջանում: Չցանկանալով հապճեպ գնահատականներ տալ մեր պետութեան հաստատութեանական բնաշրջմանը, փաստենք, որ մինչ օրս ՀՀն, չնայած «Հոգեւոր Հայաստանի» եւ հայկական ցանցերի գաղափարների առկայութեանը, չի մշակել իր քաղաքակրթական ինքնութեան տեսլականը, որը նրան հնարաւորութիւն կը տար ինքնարդիականանալ եւ ինքնաներկայանալ: Ըստ էութեան ՀՀի քաղաքական զարգացման անորոշութիւնները ընթացել եւ ընթանում են արեւմտեան՝ քաղաքակրթական արժէքների մեքենական ընդունման հիման վրայ, ինչը թոյլ չի տուել ճիշտ գնահատելու ժամանակի ընձեռած հնարաւորութիւնները: Այսօր, 44 օրեայ պատերազմի հետեւանքներով եւ յետպատերազմեան Հայաստանի ու հայութեան անվտանգութեամբ պայմանաւորուած կարող ենք պնդել, որ քաղաքակրթութիւնն է ուղենշում բազմամակարդակ յարաբերութիւնների խաղային ընթացքը: Թէ՛ Արցախի ինքնորոշման իրաւունքի իրացման, թէ՛ հայութեան ընդարձակուած օրակարգով անվտանգութեան ապահովման հիմնախնդիրներին անդրադառնալիս ակնյայտ է որ գործ ունենք «ուժային բեւեռների» կողմից «փափուկ ուժի» միջոցով ուղղորդուող կրատրական ազդակների հետ: Սակայն, քանի որ քաղաքակրթական կողմնորոշիչները մաքուր չեն լինում, ապա մեր համոզմամբ՝ ինքնութեան արդիականացումը չի ենթադրում քաղաքակրթական այս կամ այն բանաձեւի մերժում: Այդուհանդերձ ի՞նչ պայմաններում կը կարողանային հայկական եւ Մերձատր Արեւելքի միւս տեղային քաղաքակրթութիւնները բացայայտօրէն ինքնորոշուել՝ ձեւաորելու սեփական օրակարգ:

Այս դիտանկյունուց կարելի է քաղաքական համարում առաւել խորութեամբ գննել երկու հիմնախնդիր: **Առաջին**, արաբական զարնան²⁵ տարերայնութիւնն ու համընդգրկուն բնոյթը (չնայած դրա աղէտաբեր ընթացքին), վերահաստատում են այն տեսակէտը, որ միջազգային քաղաքականութիւնը քաղաքակրթօրէն եւ առարկայօրէն վերլուծելու անհրաժեշտութիւն կայ: **Երկրորդ**, հայկական քաղաքակրթութեան վերադարձը Մերձատր Արեւելք նման է հայկական վերածննդի, քանի որ քաղաքական ապակողմնորոշումների, անորոշութիւնների եւ ձախողումների յորձանուտում յայտնուած ՀՀն հնարաւորութիւն է ստանում վերաթեւորելու իր պատմական «**Ես**»ը, արժէքաբանօրէն կողմնորոշուելու դէպի ինքզինքը եւ ձեւաորելու միւս տեղային քաղաքակրթութիւնների հետ յարաբերուելու գաղափարաբանական յենարան: Հայկական կենսական շահերի իրաւականացումը ոչ միայն պատմական արդարութեան վերականգնում է, այլեւ հայկական ռազմավարական շահերի գիտակցուած վերակառուցման, բանական քաղաքական որոշում-

²⁵ “Arab Spring,” *Britannica*, <https://www.britannica.com/event/Arab-Spring> :

ների կայացման իրօրինակ փուլ: Այն տարածական առումով մեծացնում է հայկական արժեշահային հետաքրքրությունների աշխարհագրությունը, իսկ ժամանակային առումով - թե՛ եռաչափ՝ անցեալ-ներկայ-ապագայ - այնուամենայնիւ միտում է ապագայի հիմնախնդիրների բացայայտմանը:

Հայկական քաղաքակրթական միջավայրը հնարաւոր չէ բացայայտել առանց այլ քաղաքակրթութիւնների հետ նրա ունեցած կապի: Ուստի, եթէ հայկական քաղաքակրթութեան տեղն ու դերը վճռելու լինենք քաղաքական զարգացման լոյսի ներքոյ, ապա պէտք է ընդունել, որ այն լիովին տեղաւորում է պատմութեան ու քաղաքակրթութեան անորոշութիւններից առաջ եկած անխախտ օրինաչափութիւնների դաշտին: **Բաական է նշել, որ արցախեան վերջին պատերազմի հետեանքով ՀՀն փաստօրէն յայտնուել է Արեւելք-Արեւմուտք, Հիւսիս-Հարաւ²⁶ շահային անորոշութիւնների տիրոյթում:** Անցած քառորդ դարի պետականաշինութեան փորձը վկայում է, որ մինչ օրս ՀՀին, առնուազն իր արտաքին քաղաքականութեան ծիրում, հնարաւորութիւն չի տրուել քաղաքակրթական ինքնորոշման միջոցով ձեւաւորելու ազգային քաղաքական օրակարգ: Մի կողմից եւրոպական ու ամերիկեան, իսկ միւս կողմից եւրասիական վերազգային նախագծերին իր մասնակցութեամբ ՀՀն փորձել է օգուտներ քաղել, որի արդիւնքում յայտնուել է բարդ աշխարհաքաղաքական գործընթացների էպիկենտրոնում: Ներկայ միջազգային քաղաքական գործընթացները Մերձաւոր Արեւելքում եւ Եւրասիայում թոյլ են տալիս մտածել, որ քաղաքակրթութիւնների երկխօսութեան տեւական ազդեցութիւն ունեցող կառուցակարգերի առկայութեան պայմաններում հնարաւոր է անորոշութիւնների տիրոյթից դուրս բերել այն պետութիւնները, որոնք անորոշութիւններ մակածելով դառնում են դրանց զոհը: Ակնյայտ է, որ ստեղծուած բարդ իրավիճակում այդպիսի կարգավիճակում են այնպիսի արեւելաեւրոպական, եւրասիական-կովկասեան, մերձարեւելեան երկրներ, ինչպիսիք են Ուկրաինան, Վրաստանը, Հայաստանը, Յունաստանը, Լիբանանը, Սիրիան, անգամ Թուրքիան, Արաբական Միացեալ Էմիրութիւնները, Իրանը: Անհրաժեշտ է կանխատեսել, թէ ԱՄՆ զինուած ստորաբաժանումների դուրս բերելուց յետոյ, քաղաքակրթութիւնների զարգացման համամոլորակային պրիսմակով դիտարկելիս ինչպիսի հեռահար հետեանքներ կարող է ունենալ Աֆղանստանի կառավարումը փաստացի ստանձնած Թալիպան շարժումը²⁷: Այս իրավիճակում անհասկանալի է, թէ առանց քաղաքակրթութիւնների երկխօսութեան ինչպէս կարող են Մերձաւոր Արեւելքի եւ ամբողջ Եւրասիայի քաղա-

²⁶ N. Korrami, "How China gains from Armenia-Azerbaijan war," <https://eurasianet.org/perspectives-how-china-gains-from-armenia-azerbaijan-war>

²⁷ R. Weitz, "Central Asia's Taliban Surprise," Middle East Institute, September 16, 2021, <https://www.mei.edu/publications/central-asias-taliban-surprise> :

քական դերակատարների շահերը համընկնել կամ համադրուել առանց անելուդ հակամարտության աճի:

Եթե բազմակրթն եւ բազմաէթնիկ այնպիսի երկրներ, ինչպիսիք են Լիբանանը, Սիրիան, մասամբ՝ Իրանը եւ Վրաստանը, քաղաքակրթութեն կողմնորոշուեն, իսկ ՀՀն վերջապես ինքնորոշուի իր քաղաքական-քաղաքակրթական առաջնահերթութիւնների մէջ, ապա մեր համոզմամբ հնարաւոր կը լինի զարգացնել ազգային քաղաքական օրակարգ: Ելակէտ ընդունելով Ֆրկըսընի մեկնաբանութիւնները աշխարհի զարգացման մասին ըստ քաղաքակրթական օրինաչափութիւնների՝ յուժ կարելոր է հասկանալու համար այն տեղապտոյտը, որն առաջանում է միջազգային յարաբերութիւնների ապաքաղաքակրթական վերլուծութեան արդիւնքում²⁸: Հարկ ենք համարում նշել, որ հայկական քաղաքակրթութեան վերադարձը Մերձաւոր Արեւելք պայմանաւորուած է տեղի ունեցող գործընթացների քաղաքական ժամանակի մէջ դրսեւորած քաղաքակրթական ցանցային տրամաբանութեամբ: Երկխօսութեան ծաւալման հարթակները կարող են տարաբնոյթ լինել: Արցախեան վերջին պատերազմի անարդարացի ելքը, փաստօրէն վտանգելով արցախահայութեան ինքնորոշման, կեանքի, զարգացման իրաւունքն ու հնարաւորութիւնը կամ դրա իրացումը դրել է միջազգային համայնքի բարեհաճութիւնից կախեալ վիճակում²⁹: Դա էլ հարկադրում է հայկեան քաղաքակրթութեանը՝ վերաթելուել իր ինքնաճանաչողութեան աստիճանը եւ վերագտնել իր տեղը Մերձաւոր Արեւելքի ազգերի եւ տեղային քաղաքակրթութիւնների շքերթում: Բաւական է նշել, որ արաբական արեւելքի երկրներում եւ Իրանում առկայ են բարգաւաճ եւ ընդունող հասարակութեան քաղաքական, մշակութային, հասարակական կեանքին ըստ ամէնայնի լաւագոյնս համարկուած համայնքներ: Սրա մասին են վկայում լիբանահայութեան, սիրիահայութեան, իրանահայութեան համայնքային կեանքի կազմակերպման բարձր մակարդակը, Մերձաւոր Արեւելքի հայկական գաղթօճախների էթնօմշակութային կեանքը, նրանց մասնակցութիւնն ընդունող պետութիւնների քաղաքական կեանքին: Յաւօք մինչ օրս ՀՀ արտաքին քաղաքական առաջնահերթութիւնների շարքին չի դասուել Մերձաւոր Արեւելքի երկրների հետ բազմաչափ յարաբերութիւնները որպէս ռազմավարական դիտարկելու անհրաժեշտութիւնը: Սակայն արցախեան 44օրեայ պատերազմի հետեւանքով հայկական պետութեան անվտանգային մարտահրաւերներին արձագանգելու անհրաժեշտութիւնը, միջքաղաքակրթական ցանցային երկխօսութեան բարենպաստ պայմանների զարգացման ակնկալիքով, կարելորել են հայկական գաղթօճախներ

²⁸ Фегрюсон, էջ 28:

²⁹ “Statement by the Co-Chairs of the OSCE Minsk Group,” 29 July 2021, <https://www.diplomatie.gouv.fr/en/country-files/armenia/news/article/statement-by-the-co-chairs-of-the-osce-minsk-group-29-jul-2021> :

րի՝ քաղաքակրթական երկխոսութեան հարթակի դեր ստանձնելու գիտակցումը: Այսօր, քաղաքական իրողութիւններից ծնուած մարտահրաւերներին արձագանգելու ձգտումն անպայմանօրէն պէտք է բխի իրական հնարաւորութիւնների իրատեսական գնահատումից: Հնարաւոր է, որ հայկական մերձարեւելեան ցանցը եւ դրա հնարաւորութիւնների տեսական դիտարկումներն ընդամէնը թերահաշուարկ են: Այս առումով կարելիութիւն ենք ՀՀ՝ որպէս հայկեան քաղաքակրթութեան վերածննդի ուղեկցողի քաղաքական դերը: Այսուհետ անհրաժեշտ է դիտարկել ՀՀ արտաքին քաղաքականութիւնն իր դերային գործառութային բազմիմաստութեան մէջ: Այսպէս, ՀՀն որպէս հայկական աւանդական գաղթօճախների հովանաւոր, որպէս քաղաքակրթութիւնների երկխոսութեան նախաձեռնող եւ առաջամարտիկ, նաեւ այն պարզ պատճառով, որ «*համաշխարհային քաղաքականութեան եւ միջազգային յարաբերութիւնների վերջին զարգացումները յուշում են, որ կրօնը շարունակելու է գերիշխող դեր խաղալ համաշխարհային քաղաքականութեան մէջ [նոյնպէս] հեռու ապագայում*»³⁰:

Այս առումով կարելիութիւն են ոչ միայն լեզուն, եկեղեցին, ազգային ծեսերն ու աւանդոյթները, այլեւ դրանց խորհուրդը, սերունդների միջեւ քաղաքակրթական երկխոսութեան պահպանմամբ վարուող ընտանիքի քաղաքականութիւնը, հայութեան երկու մասերի՝ հայաստանաբնակ սփիւռքաբնակ, ցանցային կապերի ձեւաւորումն ու զարգացումը կարճաժամկէտ եւ երկարաժամկէտ փոխայցերի, գիտական, մշակութային, մարզական, կրթական հնարաւորութիւնների եւ նմանատիպ նախաձեռնութիւնների միջոցով: Մասնաւորապէս կարելիութիւն ենք ապաքաղաքական օրակարգի ձեւաւորումը, որի շուրջ հնարաւոր կը լինի համախմբել քաղաքական արժէքաբանութեամբ եւ վարքաբանութեամբ տարբերուող մարդկանց խմբերի: Փաստօրէն միջքաղաքակրթական երկխոսութիւնն ու ՀՀ «վերադարձը Մերձաւոր Արեւելք» ժամանակի հրամայականներով պայմանաւորուած իրողութիւններ են, որոնք առաջացել են ՀՀի շուրջ փոփոխուող անվտանգային միջավայրի ծնած անորոշութիւններով, ինչպէս նաեւ Մերձաւոր Արեւելքի հայութեան ճակատագրով: Փաստենք, որ արաբական գարունը, սիրիական քաղաքացիական պատերազմը, Լիբանանի ներքին խմորումներն իրենց ուղղակի ազդեցութիւնն են ունեցել հայութեան տարբեր շերտերի՝ Մերձաւոր Արեւելքում մշտապէս բնակուելու հնարաւորութեան վրայ, ինչն էլ իր հերթին վտանգել է հայկական քաղաքակրթութեան ներկայութիւնն այս գերկարելի տարածաշրջանում:

³⁰ S. G. Carter, “Christopher Dawson and Ayatollah Khatami and ‘The Dialogue of Civilizations’: A Christian–Muslim Conversation,” (paper delivered at the Centre for Christianity and Interreligious Dialogue, Heythrop College, University of London on 17 January 2007):

ՀԱՅԿԱԿԱՆ ԷԹՆՈԱԻԱԶԱՆԸ. ՕՐԱԿԱՐԳԵՐ

Հայկական քաղաքակրթության զարգացման տեսակետից կարելի էր ենթադրել, որ հայկական էթնոսալագանի համախմբման համալիր քաղաքականության մշակումը՝ գիտավերլուծական յարացույցի (պարադիգմայի) շրջանակներում: Նախաձեռնողականությամբ, տնտեսական մրցակցությամբ, հորիզոնական կապերի ամրապնդումը, մտաւոր ներուժի կիրառումը այսպիսի տեսլականի ձեւատրման միտում ունեն: Բաւական է նշել, որ հայության շուրջ երկու երրորդը բնակւում է ՀՀ-ից դուրս, Սփիւռքի միակ հայկական համալսարանը Պէյրութի Հայկազեան Համալսարանն է: Հայկական մտաւոր ներուժի յառաջացումն ու ուղղորդումը հայկական էթնոսալագանում անհրաժեշտ է իրագործել առաջին հերթին հայկական կրթական տարածութեան ստեղծմամբ: Եթէ ՀՀ-ն համարկւում է եւրոպական բարձրագոյն կրթութեան տարածութեանը³¹, իսկ Սփիւռքն աչքի է ընկնում իր կենտրոնացւածութեամբ եւ կազմակերպական բարձր մակարդակով, ապա ակնյայտ է, որ հայկական հանրակրթական եւ բարձրագոյն կրթութեան ցանցի բացակայութիւնը, որտեղ հորիզոնական կապերով եւ ընդհանուր կամ համատեղ կառավարմամբ կարելի է հասնել հայկական արժէքների եւ ազգային օրակարգի ձեւատրման, ոչ միայն մարտահրաւէր է, այլեւ բացթողում: Նկատի ունենալով Սփիւռքի դպրոցների աւանդոյներն ու համբաւը, ՀՀ եւ Սփիւռքի շահագրգիռ կողմերի ներգրաւմամբ անհրաժեշտ ենք համարում աղբիւրները համակարգող, հաշուառող եւ իրացնող կառուցակարգերի ձեւատրում, հայկական ազգային կրթական ցանցի զարգացում, ՀՀ եւ Սփիւռքի կրթական ցանցերի, էթնօգիտակցութեան, էթնօկրօնական կեանքի, եկեղեցական, մարզական, գիտակրթական, ուղեղների շրջանառութեան, մտաւորական ներուժի համակարգման կենտրոնացում: Սոսկ ըղծախօսութեան չվերածուելու նպատակով անհրաժեշտ է ուղեղային կենտրոններում նախ վերլուծել կրթական հաստատութիւնների յաջողութեան բանաձեւերը, հայկական համայնքների ներուժը, ՀՀ հաստատութեանական եւ ֆինանսական աջակցութեան ծաւալներն ու հնարաւորութիւնները են.: Հայկական ինքնութեան, հայկական քաղաքակրթութեան իրացման, ՀՀ արտաքին ու ներքին քաղաքականութեան ծիրում հայութեան քաղաքակրթական ինքնորոշման խնդրում նկատւում ենք հայութեան կողմից քաղաքական-քաղաքակրթական վախ: Փաստօրէն, հայութեան ինքնութեան ու քաղաքակրթական ինքնորոշման հնարաւորութիւնների վերծանման, գնահատման փոխարէն, գործ ունենք «փախուստ ինքնութիւնից» երեւոյթի հետ: Յաւոր հայութիւնն իր առաջ ծառացած հիմնախնդիրների լուծումը տեսնում է իրենից դուրս՝ համակրած փոքրի բարոյոյթով՝ թերագնահատելով իր հնարաւոր ազդեցութիւնը քաղաքական եւ ռազմավարական գնահատականի

³¹ “European Higher Education Area,” <https://www.coe.int/en/web/higher-education-and-research/european-higher-education-area> :

սպասող ընթացիկ իրողությունների վրայ: Հայոց պատմութեան վերջին հարիւրամեակի գնահատման հատուածայնութիւնը, զգացմունքայնութեան եւ պատմական ջոկովի յիշողութիւնների զգայական ընկալումները ծնել են որոշակի թերաբժեքութիւն: Սա մասնատրապէս ակնյայտ է դառնում հայութեան տարբեր հասարակական շերտերի կողմից Հայոց Յեղասպանութեան միջազգային ճանաչման գործընթացի զգայաւոր ընկալումները դիտարկելով: Միւս կողմից պատմական յիշողութեան նորովի ընկալման ճանապարհով հնարաւոր ենք համարում այս երկհակադիր երեւոյթն օգտագործել որպէս համախմբող ներուժ: Դրա շնորհիւ հայութեան զգայական շերտերը հնարաւորութիւն կ'ունենան իրենց պատմական յիշողութեան ծնած զոհի բարդոյթից ազատուել հայութեան քաղաքակրթական ինքնորոշման ծիրում: Այդ պարագայում երբ հայկական ընդհանուր կրթական համակարգը, հայոց իրաւաքաղաքական պահանջատիրութիւնը, Սփիւռքի մտաւորական ներուժի մէկտեղումը, ցանցային կապերի ստեղծած համագործակցութեան մեծաքանակ հնարաւորութիւնները, երկիրասպան անվտանգային գործընթացներին արդիւնաւէտօրէն հակազդելու կամքը կ'իրացունեն զգացմունքային ընկալումներից դուրս՝ իրաւաքաղաքական, մշակութային, գիտակրթական, պետական հաստատութիւնների միջոցով:

Հանդիսանալով ընդունող հասարակութիւնների հետ համարկման ուղիւ եւ, հայկական կրթական տարածութիւնը կարող է հորիզոնական առածգական կապերը ընդլայնել մինչեւ ընդունող երկրների քաղաքական, մշակութային վերնախաւ, ինչը հայկական կրթական տարածութեանը կը հաղորդէր արժէքային կողմնորոշիչների յարուցիչի դեր: Ուսանողական փոխայցերը, մարզական, մշակութային միջոցառումները եւ համատեղ գիտական նախագծերը, ուղեղային կենտրոնների հետ համատեղ աշխատանքի համադրմամբ, կարող են էապէս ընդլայնել հայկական քաղաքակրթութեան եւ ՀՀ հնարաւորութիւնների տիրոյթը՝ յաղթահարելով մեր ձեւակերպմամբ **«քաղաքական-քաղաքակրթական վախի»** երեւոյթը ՀՀում եւ Սփիւռքի գաղթածախներում:

Հայաստանի վերադարձը Մերձաւոր Արեւելք անհրաժեշտ է հետեւեալ առումներով.-

ա) Հայաստանը գտնուելով Մերձաւոր Արեւելքի ամենաբարձրադիր գօտիներից մէկում՝ Հայկական Բարձրաւանդակում, պատմականօրէն ձեւաւորել է յարաբերութիւնների բազմաբնոյթ ձեւաչափ, թէ՛ արաբական երկրների, թէ՛ հարեւան Իրանի Իսլամական Հանրապետութեան հետ: Այս տիրոյթում կարելի է հայկական գաղթածախների պահպանումն ու զարգացումը Մերձաւոր Արեւելքի խոշոր քաղաքներում հենց մարդկային ու միջմշակութային հաղորդակցութեան տեսակէտից:

բ) Արեւելք-Արեւմուտք շփումների արագացումը յանգեցրել է տեղային քաղաքակրթութիւնների հանդիպման, երբ Ֆրանսիան, Յունաստանը, Ե-

գիպտոսը, Կիպրոսը 3+1 ձեաչափով³² փորձում են զսպել թուրքական ծաւալապաշտութիւնն Արեւելեան Միջերկրականում, իսկ Իսրայէլի եւ Թուրքիայի ռազմավարական շահերը չնայած յաճախ համընկնում են, Անքարան փորձում է պաղեստինցիների իրաւունքները դարձնել արաբական աշխարհում իր դիրքերն ամրապնդող խաղաքարտ՝ մերթընդմերթ ընդհարուելով Իսրայէլի հետ:

գ) Նկատի ունենալով Իսրայէլի եւ Թուրքիայի անմիջական ներգրաւութիւնը 2020ի ադրբեջանական ահաբեկչական պատերազմում ընդդէմ Արցախի կեանքի եւ երջանկութեան իրաւունքի պետութեանական նիւթականացման...:

Անհրաժեշտ է կողմնորոշուել դէպի մերձաւոր եւ դաշնակից պետութիւնների մերձարեւելեան օրակարգի եւ հայկական շահերի համարկման, մանաւանդ նկատի ունենալով ՌԴ լայնածիր ներգրաւումը մերձարեւելեան աշխարհաքաղաքականութեան մէջ Սիրիայի քաղաքացիական պատերազմի թնճուկում: Հնդկ մեկնաբան Տիլիպի Հիթոն Ռուսաստանի ներգրաւումը սիրիական հակամարտութիւնում փաստում է, որ այն յանգեցրել է «տարածաշրջանի ուժային հաւասարակշռութեան» փոփոխութեան: Պատահական չէ, որ «2015ի Հոկտեմբերից մինչեւ 2016ի Օգոստոս Փոփոխի հետք բանակցութիւններ են վարել բարձրաստիճան պաշտօնեաներ Սաուդեան Արաբիայից, Արաբական Միացեալ Էմիրութիւններից, Քաթարից, Պահլէյնից եւ Թուրքիայից»³³:

Թուրքիայի Հանրապետութիւնն արցախեան վերջին պատերազմի ընթացքում ունէր ուղիղ մասնակցութիւն ազատ Արցախի դէմ ադրբեջանական գործողութիւնների մէջ: Այս մասին են վկայում ոչ միայն երրորդ կողմերի արձագանքը, այլեւ հենց թուրքական պետութեան եւ ՀՀ պաշտօնական փաստաթղթեր, յայտարարութիւններ³⁴: Բնական է, որ թուրքական պետութեան ընդարձակումն արդէն իրողութիւն է Կիպրոսից մինչեւ Սիրիա եւ Լեռնային Ղարաբաղ: Չնայած ռուսական խաղաղապահների առկայութեանը, շարունակում ենք ականատես լինել արցախահայութեան կեանքի իրաւունքի կոպտագոյն խախտումների: Այս հայկական քաղաքկրթութեան անվտանգային ինքնորոշման կարեւոր ազդակ է: Ակնյայտ է, որ Ուկրայնայում եւ այլուր անվտանգային պատի առաջ կանգնած Ռուսաստանի Դաշնութիւնը չի կարող միայնակ յաղթահարել Կովկասեան Լեռնաշղթա-

³² Ministry of Foreign Affairs of the Hellenic Republic “Meeting of the Ministers of Foreign Affairs of Greece, Cyprus, Egypt and France (Athens, 19.11.2021),” <https://www.mfa.gr/en/current-affairs/statements-speeches/meeting-of-the-ministers-of-foreign-affairs-of-greece-cyprus-egypt-and-france-athens-19112021.html> :

³³ D. Hiro, *Cold War in the Islamic World: Saudi Arabia, Iran and the Struggle for Supremacy*, Oxford University Press, 2018, էջ 296:

³⁴ «ՀՀ ԱԳՆ Յայտարարութիւնը», 21 Հոկտեմբերի, 2020, https://www.mfa.am/hy/interviews-articles-and-comments/2020/10/21/mfa_st/10562 :

յից հարաւ գտնուող իր ամանդական դաշնակիցների անվտանգային մարտահրաւերների ծնած վտանգները: Հնարաւոր է, որ հայկական, իրանական, Լեւանտի արաբական, յունական տեղային քաղաքակրթութիւնների ինքնորոշումը ստեղծի մի այնպիսի անվտանգային համագործակցութեան տիրոյթ, որում իրենց առաւել շօշափելի դերակատարութիւն ունենան Մոսկուան եւ Փարիզը:

Առաջիկայ տարիների եւ երկարաժամկետ կտրուածքով դժուար չէ կանխատեսել ուժերի վերադասաւորումները Մերձատւր Արեւելքում, սակայն արդեօ՞ք հայկական քաղաքակրթութիւնը պատրաստ է ինքնորոշման միջոցով ներկայացնել մերձարեւելեան քաղաքականութեան հիմնական դերակատարի հայտ: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ արցախահայութիւնը ամբողջութեամբ ռուսական խաղաղապահ առաքելութեան շնորհիւ է հայրենագրկումից խուսափելու եւ կեանքի իր հիմնարար իրաւունքների իրացումը, այս պահին անվտանգային դերակատարի կարգավիճակի փոփոխութեան ձգտումները կարող են յանգեցնել քաղաքական խառնաշփոթութեան: Սակայն եթէ նկատի ունենանք մերձարեւելեան քաղաքականութեան արժէքային բազմաչափութիւնը, ապա ակնյայտ է դառնում, որ քաղաքական խառնաշփոթութիւնը միայն ժամանակաւոր է, իսկ ՀՀի առաջանցիկ զարգացման, նրա տնտեսական իրողութիւնների բարեշրջման, անվտանգային ներքին ու արտաքին միջավայրի հնարաւոր փոփոխութեան պարագայում է՛լ աւելի է կարեւորութիւն հայկական քաղաքակրթութեան դերը ներքաղաքակրթական երկխօսութեան տիրոյթում:

Հայկական գաղթածախների միջոցով կրթական տարածութեան ստեղծմամբ, ՀՀն հնարաւորութիւն կը ստանայ ապահովելու իր «վերադարձը» Մերձատւր Արեւելք, որին կարող են յաջորդել երկկողմ եւ բազմակողմ ձեւաչափերով քաղաքակրթական երկխօսութիւնը տնտեսական ու անվտանգային համագործակցութեան վերածելու ջանքերը: Այս առումով էլ կարելորում ենք քաղաքացիավարական սկզբունքների կիրառումը համազգային համախմբման համար, քանի որ, նմանօրինակ մօտեցումը լրացնում է ժողովրդաիշխանութեան տեսութեան մեթոդաբանական բացը՝ կարելորելով ժողովրդաիշխանութեան որակի, քաղաքացիակենտրոն կառավարման, օրէնքի գերակայութեան, մարդու քաղաքական, տնտեսական, ընկերային եւ մշակութային իրաւունքների պաշտպանութեան ներպետական եւ միջազգային ընթացակարգերի կայացումը:

Քաղաքացիական հասարակութեան զարգացումը ՀՀում կարելոր է հենց պետութեան որպէս քաղաքական գերակայ ինստիտուտի ռազմավարութեան իրացման տեսակէտից: Այս խնդրին լուծում տալու մտայնութեամբ էլ առաջարկում ենք քաղաքացիավարութիւնն ընդունել որպէս ՀՀում քաղաքացիական մշակոյթի զարգացման տեսական հիմք: Փաստօրէն մշակութային ինքնորոշման արժէքաբանական կողմնորոշիչների յարուցիչները պէտք է գտնել հենց հայկական միջավայրում՝ ձգտելով ապահովել անց-

եալներկայ-ապագայ եռաչափ կենսաքաղաքակրթական միջավայր, որտեղ անցեալից սնուող մշակութային իրողութիւններն ապահովում են ՀՀ եւ հայութեան անվտանգութիւնը մի շարք ուղղութիւններով: Հայկական քաղաքականութեան էթնօգիտակցական միջավայրը մինչ օրս մեծապէս սահմանափակուել է **Հայաստան-Սփիւռք** կապերի ամրապնդմամբ եւ փոխօգնութեամբ: Այսօրուայ հրամայականն է, դադարել անորոշութիւններ մակածելուց եւ բնականոն արդիականանալ հայկական քաղաքականութեան առանցքային արժէքների շրջանակում: Տարակուսելի է, որ հայկական քաղաքական վերնախաւը չի կարելորում քաղաքակրթական միջանի հարթութեան մէջ դերային բազմաձեւութեամբ ինքնորոշուելու կարելորութիւնը, այլապէս հայկական քաղաքացիական հասարակութեան արժէքաբանական կողմնորոշիչները չէին կարող հակադրուել ազգային ինքնութեան բնականոն արդիականացմամբ հայկականութեան ծիւերի պահպանմանն ու զարգացմանը: Եկեղեցու, տղամարդու եւ կնոջ աւանդական կերպարի, ազգային արժէհամակարգի, անգամ՝ կենցաղային հարթութեան վրայ պահպանուող աւանդոյթների ու սովորոյթների դէմ տարատեսակ գրոհները միարժէք են: Միարժէք են քանի որ զրկում են հայութեան կա՛մ քաղաքակրթօրէն ինքնորոշուելու, կա՛մ ինքնուրոյն քաղաքակրթական պատկանելութիւնը վճռելու հնարաւորութիւնից եւ յանգեցնում են նրա մեքենական համարկման:

Այս հանգրուանում անհրաժեշտ է զուգահեռներ անցկացնել իսլամական եւ հայկական քաղաքակրթութիւնների միջեւ: Իսլամական քաղաքակրթութեան նկատմամբ վերաբերմունքն ունի հայկական քաղաքակրթութեան ինքնորոշման խնդիրների բարդութեան բազմաշերտութիւնը: Մի կողմից, ներքաղաքակրթական տարանջատուածութիւնը յանգեցրել է տարբեր ճամբարների միջեւ կատաղի մրցակցութեան, միւս կողմից, սակայն, Արեւմուտքի ստեղծած «ուրիշը» դիտարկուել է որպէս հակադիր բեւեռ՝ ինքն իրեն մղելով անորոշութիւնների յորձանուտ: Արեւմտեան քաղաքակրթութեան կողմից իսլամի նկատմամբ դրսեւորած վարքաբանութեան կողմնորոշիչներն են այլ կրօնական պատկանելութիւնը, քաղաքակրթութեան տարածութեան աշխարհագրական փոխադասաւորութիւնը, զարգացման տարբերութիւնները, աշխարհաքաղաքականութիւնը եւն.:

Յատկանշական է, որ քաղաքակրթութիւնների բախումն արդէն ԻԱ դարում ստանում է Արեւելք-Արեւմուտք աշխարհագրական նրբերանգներ, երբ իսլամական Քոսովոյի անկախութիւնը³⁵, որը հակամարտում է ուղափառ քրիստոնեայ Սերպիայի դէմ, դառնում է աշխարհաքաղաքական ուժային կենտրոնների միջեւ մրցավազքի արտացոլում:

³⁵ “A Guide to the United States’ History of Recognition, Diplomatic, and Consular Relations, by Country, since 1776: Kosovo, Office of the Historian,” <https://history.state.gov/countries/kosovo> :

Քոսովոյի դէպքը մեծ տէրութիւնների աշխարհաքաղաքական վարքաբանութեան դասական օրինակ է եւ քաղաքական-քաղաքակրթական կողմնորոշիչների ցուցիչ: Բնական է, որ ՀՀն, նկատի ունենալով ՀՀ քաղաքացիների մեծամասնութեան կրօնական զգացմունքներն ու պատկերացումները, հարկադրուած է հաշուի առնել միջմշակութային փոխազդեցութիւնների եւ հասարակութիւնների քաղաքական վարքաբանութեան վրայ կրօնի ազդեցութիւնը: Սակայն հայկական քաղաքակրթութեան վերածնունդը միջկրօնական երկխօսութեան դաշտում դիտարկելով՝ ՀՀն կարող է ստանալ քաղաքակրթութիւնների երկխօսութեան լայն դաշտ, որտեղ իր քաղաքակրթական ինքնորոշումն ընկալուի որպէս տեղային քաղաքակրթութեան քաղաքական նկրտումների հաստատութեանականացում:

Հետեւաբար կարելի է, որ հայ մարդն ինքնորոշուի նախ իր պատկերացումներում՝ հայ մարդու նշանային համակարգի բազմաշերտութեան եւ արտաքին ու ներքին հակասութիւնների յաղթահարման հերոսական-ոգեղէն արդիականացմամբ: Պատմական յիշողութիւնը դիտարկելով որպէս ազգային կենսափորձի կուտակման ձեւ, այդուհանդերձ հարկադրուած ենք համարում շեշտել, որ ազգային նշանային համակարգի եւ հնատիպերի մշակութաբանական-մարդաբանական ուսումնասիրութիւնների քաղաքական գնահատման սակաւութիւնը սահմանափակում են հայ մարդու՝ «ո՛վ եմ ես» հարցին յստակօրէն պատասխանելու հնարաւորութիւնները, ինչն էլ նրան դրդում է անհատի մակարդակում փնտռելու իր ազգային ինքնութեան չափորոշիչները՝ դառնալով զանազան արտածին հոսանքների համակիր կամ զոհ: Այս իմաստով հայկական քաղաքակրթութիւնը յարում է նաեւ իսլամական քաղաքակրթութեանը՝ ինչպէս ինքնութեան որոնումների մշակութային իմաստաբանութեան բազմաչափութեամբ, այնպէս էլ, մեր համոզմամբ, արժէքաբանօրէն: Սրա հետեւանքով էլ հայ եւ մահմետական մշակութային տարածքների փոխազդեցութիւնների դաշտում ձեւաւորուած քաղաքական եւ ընկերային մարդաբանութեան հարցերը մեր համոզմամբ դեռեւս մնում են մեծապէս չուսումնասիրուած:

Վերոշարադրեալը մեզ թոյլ է տալիս հայկական կրթական տարածութիւնը դիտարկել մի շարք քաղաքական-քաղաքակրթական չափումներով: Նախ, կրթական տարածութեան համարկումը կարող է նոր հնարաւորութիւններ ստեղծել հորիզոնական կապերով ցանցային յարաբերութիւնների զարգացման համար, գործնական հարթակ դառնալ ինչպէս միջմշակութային հաղորդակցութեան ու մարդկային շփումների, այնպէս էլ տարբեր արժէշահային խմբեր ներկայացնող մարդկանց միջեւ երկխօսութիւն ձեւաւորելու համար: Մեր համոզմամբ հայկական կրթական տարածութիւնը կ'օգնի ՀՀին ու հայկական գաղթածախներին մասնակցել աշխատանքի միջազգային բաժանմանը, մէկտեղել հայկական էթնօաւազանի մարդկային եւ մտաւորական աղբիւրները՝ միեւնոյն ժամանակ պահպանելով յարաբերական ինքնուրոյնութիւնն ինչպէս քաղաքակրթական ինքնութեան,

այնպես էլ քաղաքական կողմնորոշման իմաստով: Այլ կերպ ասած, հայկական կրթական համակարգը ունակ է ձեւաւորելու մի ընդհանրական հարթակ, որտեղ գաղափարների յառաջացման եւ մարդկանց ուղիղ շփումների խաչմերուկում հնարատոր է մեծացնել հայութեան համազգային մրցունակութիւնը եւ ձեւաւորել ազգային քաղաքական-քաղաքակրթական տիրոյթ:

Յատկանշական է, որ «փափուկ ուժի» տեսութեան հիմնադիր, ամերիկացի գիտնական Ճոզըֆ Նայը որպէս փափուկ ուժ դիտարկում է մշակութիւնը, քաղաքական արժէքները եւ արտաքին քաղաքականութիւնը³⁶: Եթէ նկատի ունենանք, որ հայկական գաղթածախները եւ հայկական կրթական տարածութիւնը մշակութային եւ արտաքին քաղաքական նպատակների են ծառայում անուղակիօրէն, ապա ստացում է, որ փափուկ ուժի համապարփակ օրակարգ ձեւաւորելու համար հայկական քաղաքակրթութեանը հաստատութեանական մակարդակում պակասում է սոսկ քաղաքական արժէշահային կողմնորոշիչների համալիրը, իսկ որպէս այդպիսին մեր պատկերացմամբ կարող են ծառայել միջքաղաքակրթական երկխօսութիւնը, Մերձատր Արեւելք-Եւրասիա-Արեւելեան Եւրոպա քաղաքական հարթակի ձեւաւորումը, որոնք կ'իրաւականացնեն բնիկ քաղաքակրթութիւնների քաղաքական նկրտումները՝ ուղիղ սպառնալիք չհանդիսանալով ազատական աշխարհակարգի կամ իսլամական, ռուսական, չինական ձգտումների համար: Պատահական չէ Նայի այն դիտարկումը, թէ «երբ որեւէ երկրի մշակութիւնը ներառում է տիեզերական արժէքներ, իսկ նրա քաղաքականութիւնը (policies) նպաստում է ուրիշների կողմից ընդունելի արժէքների եւ շահերի առաջխաղացմանը, այն մեծացնում է ցանկալի արդիւնքին հասնելու հաւանականութիւնը՝ գրաւչութեան եւ պարտականութեան յարաբերութեան պատճառով, որն այն ստեղծում է»³⁷:

ԵԶՐԱՓԱԿՈՒՄ

Հայկական քաղաքակրթութեան քաղաքական չափման ուսումնասիրութիւններով յանգում ենք հետեւեալ եզրակացութեան.-

Անհրաժեշտ է փաստել, որ հայկական քաղաքակրթական ինքնութիւնն իր արժէքաբանութեան եւ կողմնորոշումների մէջ անորոշ է այն առումով, որ չկան քաղաքակրթական ինքնութեան կենցաղ-մշակութային եւ ընկերային չափանիշեր, ընդհանուր կրթական տարածութիւն, ազգային իտէալների ռազմավարական համակարգում եւն.: Այս բացը լրացնելու նպատակով առաջարկում ենք յետագայ հետազոտութիւններով պարզել հայկական ինքնութեան ընկերային, կենցաղային, մշակութային բազմաշերտութեան

³⁶ J. S. Nye Jr., *Soft Power: The Means to Success in World Politics*, Public Affairs, New York, 2004, էջ 26:

³⁷ Նոյն:

դրսեւորումները՝ հիմք ընդունելով **լեզուի-հավատի- եկեղեցու-նիւթական ու ոգեղէնական մշակութային ժառանգութիւն բնականոն արդիականացման ցանցային գործընթացը:**

Հայկական քաղաքակրթութեան արժէքաբանական իմաստատւումն տեսակէտից անհրաժեշտ ենք համարում յետազայում նմանօրինակ հետազօտութիւնները՝ ազգային աշխարհայեցողութեան ընկերամշակութային միջավայրից բխեցուած օրինակների հիման վրայ: Համոզուած ենք, որ առանց հայկականութեան, հայեցիութեան, հայ մարդու նախակերպարների քաղաքական ու մշակութային վերծանման հնարաւոր չէ ապահովել հայկական քաղաքակրթութեան շարունակականութիւնը ե՛ւ ՀՀի ե՛ւ Արցախի ե՛ւ Սփիւրքի անվտանգ ապագան:

ARMENIAN CIVILIZATION IN THE CONTEXT OF CURRENT POLITICAL DEVELOPMENTS IN THE MIDDLE EAST

(Summary)

MARIAM MARGARYAN (mariam.margaryan@paara.am)

GARIK POGHOSYAN (garik.poghosyan2011@gmail.com)

In the context of the clash and dialogue of Eastern and Western civilisations, the paper argues the importance of the reemergence of the Armenian civilization in the Middle East, which should be based on an Armenian educational platform. In this regard, the paper theorizes a number of relevant issues and assesses them from past, present and future perspectives.

The authors highlight the importance of the paradigmatic analysis of the implications of current uncertainties. They note that in order to manage these implications it is necessary to include a broad set of cultural and anthropological issues, which should be analysed through current political processes.

